

1. Ինեկոբանկ ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ **կոստյումների** մատակարարման վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև **27.09. 2024, 17:00**

- Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am Էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը -27.09.2024/ **կոստյում**: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել .rar տարբերակով, կոդավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո procurement@inecobank.am Էլ Հասցեով մինչև 30.09.2024թ-ին մինչև ժ. 11:00 :

- Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ “Ինեկոբանկ” ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝

- **ԳՆՀ կոդը -30092024/ կոստյում**
- մասնակցի անվանումը,
- ներկայացման ամսաթիվը,
- ստացող՝ Ինեկոբանկ ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:

3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել Կոնտակտային

անձ՝

1.Ֆինանսական ծառայություն, Գնումների բաժնի պատասխանատու աշխատակից Լուիզա Ղազարյան, +37433008896

4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ:Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Զառաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և 'Հրապարակային սակարկությունների մասին' ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝
 - Գնառաջարկ,
 - Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
 - Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ),
 - Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոններին համաձայնությունը
 - *(ցանկացած այլ չափանիշ՝ սահմանված Կարգի 6.3.4.3.1 կետով):*
8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասնել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
13. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

ԳՆԱՌԱՋԱՐԿ

Ինտելեքտուալ ՓԲԸ կոստյումների մատակարարման

գնառաջարկների ներկայացման հարցում

	Գնման առարկայի անվանումը	Քանակ (հատ)	Միավորի արժեքը ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
1	Պիջակ, սև	40		
2	Վերնաշապիկ, սպիտակ	80		
3	Փողկապ, սև	40		

Առաջարկում ենք կատարել մատակարարումը _____ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կախնավճար _____ դրամ:

_____ Մասնակցի/կազմակերպության անվանումը

_____ Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝

" _____ " 2024թ

Կ.տ